ԼՂԻՄ. ՎԻՃԱԿԸ ԾԱՆՐ Է

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 24 սեպտեմբերի (ՏԱՍՍ-ի թղթ.): Անչափ ծանր վիճակ է ստեղծվել Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսության մեջ:

— Վառելիքի բացակայության հետևանքով տնտեսություններում դադարեցված է խաղողաքաղը, որի պետական պատվերը թերակատարվել է 60 տոկոսով: Եթե շրջափակումը շարունակվի ևս տասը օր, կկորչի առատ բերքը,— ասում է ԼՂԻՄ-ի ագրոարդի նախագահ Լ. Պետրոսյանը:— Էլ ավելի վատ է վիճակը հանրային անասնապահությունում: Մենք հասցրել ենք ստանալ խտացված կերի կիտամյա ֆոնդի միայն մեկ տասներորդը: Անասունները երկրորդ շաբաթն է, ինչ չեն կերակրվում, խոզապահական համալիրներում սկսվել է անասունների արտադրանքային ապանդը:

ԼՂԻՄ-ի շրջափակումը վընասներ է հասցնում նաև հենց Ադրբեջանի ժողովրդական տնտեսությանը: ՏԱՍՍ-ում Կիրովաբադի մսի կոմբինատի ղեկավարներից տագնապալի հեռագիր է ստացվել ինքնավար մարզից մսի, հատկապես խոզի մսի թերամատակարարումների մասին: Միևնույն հենց Կիրովաբադում մի քանի օր առաջ բազմահազարանոց ամբոխը կանգնեցրեց և Ստեփանակերտ վերադարձրեց բենզատարների բանակային շարասյունը, որը գինվորական պահեստներ էր ուղղորդում վառելիքի համար:

Փաստորեն փակ է ավտոտրանսպորտի մուտքը մարզ, երրորդ շաբաթն է Ստեփանակերտ չեն հասնում մարդատար և բեռնատար գնացքները: Այս պայմաններում ԼՂԻՄ-ի բնակչության կենսապահովումը ստիպված է իր վրա վերցնել ռազմափոխադրական ավիացիան: Սեպտեմբերի սկզբից այն փոխադրել է ավելի քան 250 տոննա պյուր, ավելի քան 50 տոննա պարենային և 30 տոննա արդյունաբերական ապրանքներ, դեղամիջոցներ և այլ կարևոր բեռներ: